

Գ.Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, Ա.Ֆ. ՍԱՐՈՅԱՆ

**«ԲԱՉԵԼ 3» ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

2007 թվականին սկիզբ առած համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, որի առաջնային փուլը բնութագրվում է «իրացվելիության փուլ» անվանումով, ևս մեկ անգամ ապացուցեց բանկերի բնականոն գործունեության համար իրացվելիության անհրաժեշտ բուֆերներ ունենալու կարևորագույն պահանջը, որը և հաշվի առնելով՝ Բազելյան կոմիտեն ձեռնամուխ եղավ բանկերում իրացվելիության կառավարմանն ուղղված մի շարք սկզբունքների մշակմանը:

Առանցքային բաղադր. իրացվելիության նորմատիվ, բանկային համակարգ, Բազել 3, իրացվելիության կառավարում, բարձր իրացվելի ակտիվներ:

Նախաճգնաժամային շրջանի համեմատությամբ, մի կողմից՝ իրացվելիության ռիսկի կառավարման ցածր մակարդակը, և մյուս կողմից՝ ճգնաժամի պայմաններում ֆինանսական միջոցների ներգրավման նկատելի դժվարացումներն ու թանկությունը պայմանավորեցին այն առանցքայնությունը, որոնք «Բազել 3»-ում ներառվեցին իրացվելիության ռիսկի զսպմանն ուղղված նորմատիվների տեսքով, ինչը Բազելյան կոմիտեի կողմից չէր արվել հրապարակված նախորդ երկու համաձայնագրերում [1]: Տրվեցին նաև հստակ սահմանումներ և բնութագրիչներ «բարձր իրացվելի ակտիվներ» և «իրացվելի ակտիվներ» հասկացություններին:

Նախատեսվեց ավելացնել կարճաժամկետ իրացվելիության LCR (Liquidity coverage ratio) [2] և երկարաժամկետ իրացվելիության NFSR (Net Stable Funding Ratio)[3] 2 նոր նորմատիվները:

Կարճաժամկետ իրացվելիության նորմատիվը (\mathcal{L}_{CF} / LSR) կամ, որ նույնն է՝ իրացվելիության ծածկման գործակիցը նախատեսված է ապահովելու բանկի վճարունակությունը մինչև 30 օր ժամկետում, որի ընթացքում, ենթադրվում է, ղեկավարությունը կամ վերահսկող մարմինը կկարողանան ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ սթրեսային իրավիճակը հաղթահարելու և անհրաժեշտ բարձր իրացվելի ակտիվների ծավալն ապահովելու ուղղությամբ [4]: Նորմատիվը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\mathcal{L}_{CF} = \frac{\text{Բարձր իրացվելի ակտիվներ}}{\text{Չբ.միջ.գույն արտահոսք 30 օրացուցային օրում}}; \quad \mathcal{L}_{CF} \geq 100\% :$$

Երկրորդ նորմատիվի (NFSR / ՆԵՏ) կամ երկարաժամկետ իրացվելիության նորմատիվի ապահովմամբ սահմանափակվում է բանկերի կարճաժամկետ ռեսուրսներով երկարաժամկետ վարկերի ֆինանսավորումը՝ դրանով իսկ նվազեցնելով իրացվելիության անհամապատասխանության ռիսկը: Նորմատիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով:

$$\mathcal{N}_{\text{ԵՏ}} = \frac{\text{Կայուն ֆինանսավորման առկա գումար}}{\text{Կայուն ֆինանսավորման համար պահանջվող գումար}}; \mathcal{N}_{\text{ԵՏ}} > 100\% :$$


Կայուն ֆինանսավորման համար առկա գումարը կապիտալի և պարտավորությունների այն մասն է, որը սթրեսային իրավիճակում կարող օգտագործվել որպես ֆինանսավորման աղբյուր 1 տարուց ավելի ժամանակաշրջանի համար [5]: Դրա մեջ մտնում են կապիտալը, մեկ տարի կամ ավելի մարման ժամկետով արտոնյալ բաժնետոմսերը կամ պարտավորությունները, ինչպես նաև ավանդների և մեծածախ ֆինանսավորմամբ ներգրավված միջոցների այն մասը, որը, չնայած ունի մեկ տարուց պակաս մարման ժամկետ, այնուամենայնիվ, սթրես թեստավորման սցենարով ակնկալվում է, որ դրա գծով միջոցների արտահոսք չի լինի:

$$RSF = \sum_{i=1}^n A_i \times RSF_i + \sum_{j=0}^m OBS_j \times RSF_j$$

որտեղ RSF–ն կայուն ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարն է, A_i –ն՝ i -րդ ակտիվի գումարը, RSF_i –ն՝ i -րդ ակտիվի գծով առաջացող կայուն ֆինանսավորման պահանջը, OBS_j –ն՝ j -րդ հետհաշվեկշռային ակտիվի գումարը, RSF_j –ն՝ j -րդ հետհաշվեկշռային ակտիվի գծով առաջացող կայուն ֆինանսավորման պահանջը:

Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ [6] ՀՀ առևտրային բանկերը պարտավոր են պահպանել ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները, որոնց բնութագրիչները ներկայացված են¹ նկ. 1-ում՝ համաձայն նշված նորմատիվների հաշվարկման՝ ընթացիկ ակտիվներ (ԸԱ), բարձր իրացվելի ակտիվներ (ԲԻԱ), ցպահանաջ պարտավորություններ (ՑՊ) տարրերի՝ առաջին խմբի (ԱԽԱ) և երկրորդ խմբի արտարժույթի (ԵԽԱ) համապատասխան ընդգրկմամբ:

¹ Կազմվել է ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2-ի պահանջների համաձայն:




Նկ. 1. ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների բնութագրիչները


ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները պարտադիր են ՀՀ բոլոր բանկերի համար: Այդ են վկայում նաև Նկ. 2-ում և 3-ում ներկայացված փաստացի տվյալները [7], համաձայն որոնց՝ 2017 թվականի առաջին եռամսյակում բանկերը իրացվելիության համախմբված ցուցանիշների գծով նորմատիվային բազան գերազանցել են համապատասխանաբար 17.03% և 104.60% (պահանջվող նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15% և 60%):

Դիտարկելով ներկայացված արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ բանկերը ներկայումս ունեն ավելցուկային իրացվելիություն, որի հիմնական պատճառը՝ թերի տեղաբաշխումը և կանոնադրական կապիտալի համալրումն են՝ նոր նորմատիվային պահանջները բավարարելու համար:

Սակայն պետք է նշել նաև տվյալ նորմատիվների ոչ լիարժեքությունը, մասնավորապես՝ այն չի արտացոլում բանկի իրական ունակությունը՝ բավարարելու բարձր իրացվելի միջոցներով իրական մեծ ծավալի ցպահանջ պարտավորությունները և միաժամանակ բարձր իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացման անհրաժեշտության բացակայությունը [8]:



Նկ. 2. ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված Ն21 նորմատիվի փաստացի ապահովման մակարդակը ՀՀ բանկերի կողմից



Նկ. 2. ՀՀ ԿԲ կողմից սահմանված Ն22 նորմատիվի փաստացի ապահովման մակարդակը ՀՀ բանկերի կողմից

Հաշվի առնելով վերը ասվածը՝ Բազելյան կոմիտեի կողմից առաջադրված իրացվելիության նոր մոտեցումները և սահմանափակումները, մեր կարծիքով, էլ ավելի արդյունավետորեն կազդեն բանկերի իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովման վրա: Մասնավորապես՝ Բազելյան կոմիտեի կողմից առաջադրված երկու նոր նորմատիվներն ուղղորդված են Բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիության արդյունավետ կազմակերպմանը [4], [9]:

Դիտարկենք այս երկու նորմատիվների առանձնահատկությունը և տեղայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում:

Ինչպես արդեն նշվեց, իրացվելիության ծածկման գործակիցը բնութագրվում է բարձր իրացվելի ակտիվների և դրամական միջոցների 30-օրյա ժամանակահատվածում զուտ արտահոսքի հարաբերակցությամբ: Սակայն պետք է նշել նաև,

որ, ի տարբերություն Կանոնակարգ 2-ում բնութագրվող բարձր իրացվելի ակտիվների, Բազելյան կոմիտեն նախ՝ այս ակտիվները դասակարգում է՝ առաջին և երկրորդ մակարդակի բարձր իրացվելի ակտիվների, այնուհետև՝ կշռում համապատասխան գործակիցներով [5]: Աղ. 1-ում ներկայացված են բարձր իրացվելի ակտիվներն ըստ կշռման գործակիցների:

Աղյուսակ 1

Բարձր իրացվելի ակտիվներն ըստ կշռման գործակիցների

Անվանում	Կշիռ
1-ին մակարդակի բարձր իրացվելի ակտիվներ	X
Կանխիկ դրամական միջոցներ	100%
ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվներ	100%
Ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նվազագույն չափ	100%
ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ այլ պահանջներ	100%
Միջազգային կազմակերպությունների կողմից թողարկված կամ երաշխավորված պարտատոմսեր	100%
ԱԱ-(Աա3) և բարձր վարկանիշ ունեցող պետությունների և կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված պարտատոմսեր	100%
ՀՀ պետական գանձապետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսեր	100%
2-րդ մակարդակի բարձր իրացվելի ակտիվներ	X
Ա-(Ա3)-ից Ա+(Ա1) վարկանիշ ունեցող պետությունների և կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված պարտատոմսեր	85%
ԱԱ-(Աա3) և բարձր վարկանիշ ունեցող ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	85%
ԲԲԲ-(Բաա3)-ից ԲԲԲ+(Բաա1) վարկանիշ ունեցող պետությունների և կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված պարտատոմսեր	50%
ԲԲԲ-(Բաա3)-ից Ա+(Ա1) վարկանիշ ունեցող ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	50%
«Բ-» և բարձր վարկանիշ ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	50%
«Գ-»-ից «Գ+» վարկանիշ ունեցող առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	50%

Սակայն, այս առումով հարկ է նշել, որ ՀՀ բանկային համակարգում շուկայական իրացվելիության ռիսկը կարևորվում է ոչ այնքան նրա իրացվելիության

մակարդակի վրա ունեցած անմիջական ազդեցությամբ, որքան դրա հետևանքով մեծածախ ֆինանսական միջոցների արտահոսք առաջանալու վտանգի հավանականությամբ: Բնականաբար, տնտեսական նորմատիվների հաշվարկում կշիռներ սահմանելու մոտեցումն ամբողջապես չի կարող դառնալ զսպող մեխանիզմ ՀՀ բանկային համակարգում:

ՀՀ բանկային համակարգում շուկայական իրացվելիության ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման համար «Բազել 3»-ով նախատեսված պահանջների այս կամ այն չափով տեղայնացումը ենթադրում է դրա վրա հիմնված մեխանիզմի կիրառումը ՀՀ բանկային համակարգում՝ ըստ գործողությունների որոշակի հաջորդականության, ըստ որի՝ ԿԲ-ի կողմից ռիսկերի գնահատման երաշխավորված մոդելների օգտագործմամբ և, հատկապես, իրացվելիության ռիսկի կառավարման մակրո սթրես թեստերի իրականացմամբ իրացվելիության սթրեսային իրավիճակներում կարող է գնահատվել ակտիվների վաճառքի հնարավոր ծավալների և արդյունքում առաջացած գների տատանումների, ինչպես նաև ֆինանսական միջոցների հավանական արտահոսքի ազդեցությունն իրացվելիության վրա:

Հիմնվելով այդպիսի վերլուծությունների արդյունքների վրա՝ կենտրոնական բանկը բանկերին կարող է առաջադրել խոշոր պարտավորությունների մասով բարձր իրացվելի ակտիվների ծածկույթի, դրանց հնարավոր կորուստներից բխող վտանգների վերանայման կամ մեղմման համար անհրաժեշտ պահուստի ձևավորման ուղիներ: Այդ գործընթացի իրավական հիմքերն ապահովելու համար ՀՀ ԿԲ արդեն նախաձեռնել է ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում կատարել լրացումներ և փոփոխություններ, որոնցով ԿԲ-ը կունենա առևտրային բանկերին իրացվելիության ռիսկերը զսպելու ուղղությամբ հանձնարարականներ տալու իրավասություն [10]:

Անհրաժեշտ է նշել նաև, որ նշված օրենսդրական փոփոխություններից բացի, ԿԲ-ն բանկերի իրացվելի ակտիվների ցածր գներով վաճառքի ռիսկի և դրա հետևանքով իրացվելիության կորուստների գնահատման նպատակով պետք է ստեղծի իրացվելիության մակրո սթրես թեստավորման արդիական համակարգ, քանի որ նկարագրված երկու նորմատիվների արժեքներն էականորեն կախված են կենտրոնական բանկերի կողմից ճգնաժամերի ընթացքի առնչությամբ կիրառվող սթրես սցենարներից: Դրանց վերաբերյալ Բազելյան կոմիտեն մշակել է առանձին ուղեցույց [6]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Basel III: International framework for liquidity risk measurement, standards and monitoring, December 2010, <http://www.bis.org/publ/bcbs188.pdf>
2. Basel III: The Liquidity Coverage Ratio and liquidity risk monitoring tools, January 2013, <http://www.bis.org/press/p130106b.pdf>
3. The net stable funding ratio, October 2014, <http://www.bis.org/bcbs/publ/d295.pdf>
4. **Paola Ferretti**, New Perspectives on the Bank-Firm Relationship Lending, Management and the Impact of Basel III Palgrave Macmillan Studies in Banking and Financial Institutions, Series Editor Bangor University UK.- 2016. –P.17-121.
5. **Izzi, L., Oricchio, G., Vitale, L.** Basel III Credit Rating Systems, An Applied Guide to Quantitative and Qualitative Models, Finance and Capital Markets Series. – 2012. - 357p.
6. ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի որոշում 39-Ն՝ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին, 28.1 կետ,
7. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>
8. **Gudni Adalsteinsson**, The Liquidity Risk Management, Guide: From Policy to Pitfalls.- Wiley, 2014. - 216p.
9. “Principles for sound stress testing practices and supervision”, Basel Committee on Banking Supervision, May, 2009. <http://www.bis.org/publ/bcbs155.pdf>
10. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք. http://www.parliament.am/draft_history.php?id=8831

Г.Н. АРЕВШАТЯН, А.Ф. САРОЯН

ПУТИ УЛУЧШЕНИЯ НОРМАТИВОВ ЛИКВИДНОСТИ В БАНКАХ РА В РАМКАХ “БАЗЕЛЬ-3”

Глобальный финансовый кризис 2007 года, первый этап которого описывается как “фаза ликвидности”, в очередной раз доказал важнейшее требование необходимости обеспечения буфера ликвидности для нормальной работы банков, с учетом которого Базельский комитет разработал ряд принципов управления ликвидностью в банках.

Ключевые слова: норматив ликвидности, банковская система, “Безель-3”, управление ликвидностью, высоколиквидные активы.

G.N. AREVSHATYAN, A.F. SAROYAN

WAYS TO IMPROVE LIQUIDITY RATIOS OF THE RA BANKS IN THE BASEL 3 FRAMEWORK

The global financial crisis of 2007, the first stage of which is described as the "liquidity phase," once again proved the most important requirement to keep the necessary buffers for the regular operation of banks, by considering which, the Basel Committee starts a series of principles on banking liquidity management.

Keywords: liquidity ratio, banking system, Basel 3, liquidity management, high quality liquid assets.

ՀՏԴ 331.556.4

Ս.Ա. ԴԱԼԼԱՔՅԱՆ, Ս.Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ-ԻՑ ԱՐՏԱԳՆԱ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՄԵԿՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԻՋՈՑՈՎ

Քննարկվել է ՀՀ առկա միգրացիոն իրավիճակը 2002-2016թթ.-ին, արտագնա միգրանտների դրդապատճառներն ու նպատակները և ՀՀ բանկային համակարգի միջոցով դրամական փոխանցումների դինամիկան: Մշակվել և ներկայացվել է արտագնա միգրանտների մեկնման գործընթացի կարգավորման գործիքակազմ, ինչպես նաև ՀՀ և նպատակակետ երկրի միջև կնքված միջպետական պայմանագրի հիման վրա արտագնա աշխատանքի կարգավորման երկու մեխանիզմ:

Առանցքային բառեր. նպատակակետ երկիր, ծագման երկիր, միգրացիոն սալո, դրամական փոխանցումներ, մեկնողների հայտարարագիր:

Ներածություն: Ժամանակակից աշխարհի կարևորագույն առանձնահատկություններից է շարժունությունը, և աշխատանքային միգրանտներն էլ համաշխարհային աշխատուժի արժեքավոր մասն են կազմում: Հարկ է նշել, որ կան առանձնահատուկ գործոններ, որոնք մարդկանց հոսքն ուղղորդում են դեպի տվյալ երկիր կամ ստիպում նրանց լքել իրենց հարազատ երկրները և ավելի լավ ապագա փնտրել այլ երկրներում: Տնտեսական անկումը, գործազրկությունը և ցածր աշխատավարձը, աղքատությունը, պատերազմները ստիպում են մարդկանց բռնել միգրացիայի ուղին: Մյուս կողմից՝ այնպիսի գործոնները, ինչպիսիք են տնտեսական աճը, խաղաղությունը, ավելի լավ կենսապայմանները, աշխատուժի առաջարկի առկայությունը և բարձր աշխատավարձը, գրավելով միգրանտներին, ուղղորդում են դեպի զարգացած երկրներ: